ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 255-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏՈՎ) ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արենիի համայնքի ավագանու 21 օգոստոսի 2025 թվականի թիվ 112-Ա որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-213 հոդվածների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ՝

1. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, 10 տարի ժամկետով, անհատույց, սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտով) տրամադրել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ հողամասերում համապատասխան հետազոտությունների, անտառհիմնման ու բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով :

2. Սերվիտուտով տրամադրված տարածքներում գտնվող խմելու և ոռոգման ջրի ջրաղբյուրները ինչպես նաև ջրագծերը ամբողջությամբ վերահսկվում են Արենիի համայնքապետարանի կողմից:

3. Սույն որոշմամբ տրամադրված հողատարածքներում իրականացվող ծրագրերի արդյունավետությունից և անհրաժեշտությունից ելնելով հետագայում վերանայել տրամադրման ժամկետը:

4. Արենի համայնքի բնակիչները իրավունք ունեն անարգել օգտվել հատկացված տարածքներից՝ խոտհնձի, խոտաբույսերի հավաքման և համատեղ համաձայնեցված այլ նպատակներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**